ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
«ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ

ՀՀ Կոտայքի մարզ, ք.Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 3-54-34

Ե- 16 11.06.2024թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ԱԲՀԿՏ-ԳՀԾՁԲ-24/07 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑ <<ԳԱՐԱՆՏ ԿԱՊԻՏԱԼ>> ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Աբովյանի համայնքային կոմունալ տնտեսություն ՀՈԱԿ-ի կողմից հայտարարված ԱԲՀԿՏ-ԳՀԾՁԲ-24/07 ծածկագրով գնման ընթացակարգի նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից <<ԳԱՐԱՆՏ ԿԱՊԻՏԱԼ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հայտերի բացման նիստից երեք աշխատանքային օր հետո գրավոր դիմում է ներկայացրել իր մասնակցության հայտը անվավեր ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկից հրաժարվելու մասին: Գնահատող հանձնաժողովի կողմից գրություն է ուղարկվել Լիազոր մարմնին և պատասխան գրություն է ստացվել 2024 թվականի մայիսի 20-ին:

Ղեկավարվելով ՀՀ <<Գնումների մասին>> օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի պահանջներով, ՀՀ ֆինանսների նախարարության 2024 թվականի մայիսի 20- ի N 03/26/10650-2024 գրությամբ, և հիմք ընդունելով ԱԲՀԿՏ-ԳՀԾՁԲ-24/07 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի մայիսի 21-ի Արձանագրություն 4-ի 1.3 կետը

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. <<ԳԱՐԱՆՏ ԿԱՊԻՏԱԼ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներքոհիշյալ տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմին՝ Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարությանը, <<ԳԱՐԱՆՏ ԿԱՊԻՏԱԼ>> ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Առդիր 1 նիշք

ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ ______________ Է.ՍԱՐԴԱՐՅԱՆ

| Մասնակցի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Անվանումը | ՀՎՀՀ, Ֆիզ անձի դեպքում ՀԾՀ | Գործունեության հասցեն | Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը | | | ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը |
| | | | Խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը | Խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանգրի միակողմանի լուծմանը | Որպես ընտրված մասնակից հրաժարվել է կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից | |
| ԳԱՐԱՆՏ ԿԱՊԻՏԱԼ ՍՊԸ | 03573256 | Կոտայքի մարզ, ք.Աբովյան, Հատիսի փող.շենք 15 բն 22 | - | - | V | 11.06.2024թ ԱԲՀԿՏ-ԳՀԾՁԲ-24/07 |

ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ՝ ____________ Է.ՍԱՐԴԱՐՅԱՆ